

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց համարատուն մեջ:

Օտարապետացիք չիմում են արգելի

Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաջօրե 10—2 ժամ

(բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարությունն ընդունվում է ամեն լիցուով:

Հայտարարությունները ընդունվում են

իրարանկալի ըստ 2 կոպեկի:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Լուսավորություն և անտեսական ուժ:—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նախկին խմբագրիչ—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, «Норядок» լրագրի թղթակցություն: Անգլիա—ԽԱՌՆ ԼՈՐԻՆԵՐ—ՀԵՐՈՒԳԻՆԵՐ—ՅԱՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—ԲԱՆԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՎԻԹ ԲԵԿ:

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԵՍՏԱԿԱՆ ՈՅԺ

I

Շատերը կարծում են որ հայոց խնդիրն են լուծում, անելով պատմական կամ քաղաքական գործադրություններ իրանց տաղանդով կամ բանասիրական յուրույնությունով, մի և նույն ժամանակ արհամարհանելով յարձակվելով հակառակորդին ամեն մի խնդրի, զրական մտքի վրա, որ նայում է խնդրի վրա ոչ այնքան զիւ առաջին անգամ, որքան քաղաքական տեսական տեսակետից:

Կան և այնպիսիներ, որոնք ուրիշ ծայրայեղություն մեջ են ընկնում: Նրանց համար չը կայ ոչ քաղաքական, ոչ անտեսական խնդիրներ, բայց հայոց խնդիրը լուծելու համար նրանք միմյանց փրկություն մի ծանապարհ են տեսնում՝ այն է հայաստանում ուսումնարանները...

Սրանց արածը մենք այն պատճառով նույնպես ծայրայեղություն ենք համարում, որ լուծումը, գրավորությունը, դրոշմները միջոցով, Հայաստանի հայերի, այն էլ միմյանց լուսավորչական հայերի մեջ, չեն

ապահովում ամբողջ Հայաստանի համար քաղաքական տեսական ապագան: Հայը կը տարածի ուսումնական հայերի մեջ, կը սահմանափակվի ազգային նեղ, չինական պատերի մեջ, քիչ շատ կը կրթվի,—բայց նույնքան մերկ կը մնայ երկու կողմից էլ: Կողմից ուսումը չի տալ նրան միջոց անձնագաղափարների հարևան բարբառյալների դեմ, արիւնքարու քիւրքը և չէրկեղը աւելի չեն յարգի զրազեւ հային, քան թէ անդրազեւ հային, նույնքան կը սպանեն, կը կողպեն գրեւ կարգաւ իմացող հային, որքան տգետ հային: Ներքինը ինչքան էլ ուսումնական հայաստանի հայը, եթէ այդ ուսման հետ նա չի միացնի իր ներթափան, անտեսական գրություն մասին բարոյքման հոգը, հայը երբեք չի կարողանալ զրազել լուծ ուսումով իրան շրջապատող, իրան թշնամի փայլերի ցեղերին, ուրիշ կողմից անտեսական վրա չը մտածելով երբեք առաջ չի առնի իր հայրենիքը սպառող գաղթականություն:

Այդ է պատճառը, որ մենք խոսելով հայոց խնդրի վրա, ինչքան մեր ոյժերը ներում էին, միշտ աշխատել ենք ուղղորդել ինքն գործնել Հայաստանի անտեսական գրություն վրա: Այդ մտքից թելադրված մենք գեւ երկու տարի առաջ մեր գաստախոսության գլխավոր նիւթը շինելովք Հայաստանի անտեսական գրություն քննելով:

Այդ է պատճառը, որ մենք չենք կարող չը համակրել մեր աշխատակից Գրիգոր Նի-

կողոսեանի նորերում յարազգի մտքերին թէ Կ. Պոլսի «Մասիս» լրագրում և թէ «Մշակի» մեջ:

Եթէ Նիկողոսեանի յայնանման մտքերի մեջ կան ծայրայեղություններ, այնու ամեն նայելու նրա գաղափարի հիմքը կատարելապես հիմքում է մինչև անգամ տարրական ուսման օգուտը և ընդունում է միմյանց անտեսական աշխատանքի կատարելագործումը, կարեւորություն չը տալով մինչև անգամ հասարակ գրագիտության, բայց նրա այդ տեսակ ծայրայեղությունը ներքին է աչքի առաջ ունեցնելով նրա յայտնած մտքերի գլխավոր նշանակությունը:

Անհրաժեշտ է որ երկու գլխավոր շարիքները, որոնց ներթափան է թիւրքաց Հայաստանը՝ նախ անընդհատ և երկրորդը՝ պատու գաղթականութիւնն է, որ միշտ արգելք կը լինի Հայաստանի անտեսական բարեփոխման. երկրորդը՝ հայերին շրջապատող հայաստանցի միւս ցեղերի դաւաճումը թշնամութիւնն է գեպի հայերը, մի հանգամանք որ եթէ չը վերանայ, երբեք չի թող տալ որ բոլոր հայաստանցիները իրանց համբարաշխ համարեն իրանց բնակված երկրի բոլոր շահերի մեջ, երբեք ոյժ չեն կազմի, որի առջև ստիպված կը լինեն պատկառել թէ թիւրքիս, թէ նույն իսկ ամբողջ Եւրոպան:

Երբ մի խնդրի ընդհանուր պրոգրամը նախադրված է, երբ նա հիմնված է ուղիղ

սկզբունքի վրա, այլ ևս անհնարին է մոլորվել մանրամասնությունների մեջ: Ահա, ուրեմն, այն նախագիծը, որով մենք պէտք է շարունակենք խօսել ներկայ խնդրի վրա և մեր հետեւող համարներում:

Շատ իրաւացի է մեր աշխատակցի ամիսը որ Հայաստանը իւրաքանչիւր տաս տարվայ մեջ կորցնում է մօտ մի միլիոն ժողովուրդ: Եթէ 200 հազար հայ մշակ ժողովուրդ մշտապես ցրված է օտարութեան մեջ, եթէ ընդունենք որ այսպիսով իր մարդուց բաժանված հայուհին տաս տարվայ մեջ կորցնում է հինգ գաւակ, ամբողջ երկրորդ տաս տարվայ ընթացքում մի միլիոնի չափ ժողովուրդ է կորցնում:

Ինչպէս պէտք է արած, որ հայ գիւղական ժողովուրդի թաւաճ, առողջ, երիտասարդ մասը մնայ իր հայրենիքում, չը դուրս գայ իր մայրենի երկրից, օտարութեան մեջ իր ոյժերը փանելով վարձկան բեռնակրութեան վրա և այսպիսով զրկելով Հայաստանի հողը մշակող ձեռքից, իսկ հայուհուն որդեկանութեան պարտաւորութիւնից:

Ի՞նչ է պատճառը որ մի ժողովուրդ գաղթում է իր հայրենիքից: Ղլխաւորապէս երկու պատճառ կարող են լինել. նախ հայրենիքի մեջ օրինական անապահովութիւնը, այսինքն որ քաղաքացու անձնաւորութիւնը ապահովված չէ հաստատուն բնիքով կամայականութեան դեմ, նրա սեփականութիւնը ապահովված չէ աւագ զանկերից կողպողվու դեմ և երկրորդ՝ ներթափան բաւականացուցիչ փաստակի

ԴԱՍԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

Վանքը մերկանում էր իր տաճարի զարդերը: Խաչերը, բուրվառները, սկիւնները, որ մինչև այնօր ծառայում էին որպէս անօթներ, որ գործ էին դրվում մեղքերի քառութեան համար,—այդ դարերի հարստութիւնները այժմ սկսվեցան գործածվել հայրենիքի փրկութեան համար: Այդ ժամանակ ինքը ժողովուրդը ոչ տակա. դժբախտութիւններ էր անում: Դժբախտից որն որ ունեւոր էր և պատերազմելու ընդունակ ուղի ունէր, իր ծախքով զինուորում էր նրան և ուղարկում էր կռուելու: Իսկ այն ընտանիքները, որ զուրկ էին չափազանց տղամարդից, օգնում էին իրանց աղքատ դրացուն. եթէ ձի չուներ, ձի էին տալիս: Եւ այսպէս, ընդհանուր զինուորութիւնը օր ըստ օրէ ամուսն էր, ընդարձակվում էր ժողովրդի ջերմ ոգևորութեան հետ:

Այն ևս սեպհականութեան իմաստը ինքն չը կար Ով ինչ որ ունէր, բոլորը ծառայում էր միայն մէկ նպատակի և այդ նպատակը ամենի համար սուրբ էր: Եթէ գտնվում էին այնպիսիներ, որոնք խնայում էին, որոնք չէին ցանկանում նուրիւր, պատահած կամաւոր զինուորը համարձակութիւն ունէր մտնել նրա տունը և իրան հարկաւոր կղած բանը՝ մի ձի, մի դէնք դուրս տանել, սակեւով:

—Բեկ համար մի և նոյն է, այդ խօս պարսկերէ պիտի տանէր, և դու լուռ ու մունջ պիտի մտնի տալիս: Այժմ ինձ պէտք է. ես գնում եմ պարսկերէն տանիս: Ինչպէս չէ պէտք է չը ծածկել:

ազատելու: Գոնէ քո որդիները կարք ապահովված կը լինի:

Թէ բէկը և թէ նրա դորապետները այս տեսակ կամայականութիւնների վրա միշտ ներդաշնակութեամբ էին նայում:

Ուսումնարանական օրվայ երեկոյեան պահուն վանքի մէջ տեղի ունեցաւ մի արտաշարժ տեսարան: Բէկը նստած էր դահլճում, նրան շրջապատել էին իր աւագները: Վանքի հիւրնկալը ներս մտաւ, յայտնեց, թէ կրկին իր պատգամաւորութիւն կամենում է ներկայանալ:

—Կրկին իր պատգամաւորութիւնը... կրկնեց բէկը մպտալով.—տեսնե՞ք ինչ են կամենում մեր քոյրիկները:

Նա վերկացաւ, և գեղեցիկ սեւը աւելի յաջած լինելու համար, ինքը անձամբ գնաց նրանց զիմաւորելու: Ներսէս արքեպիսկոպոսը և բոլոր աւագները, որ դահլճում նստած էին, գնացին նրա հետ: Մի քանի հարկուր կրկիններ լցրել էին վանքի բակը: Հայոց աշխարհի այդ համաստեղները, որոնք հայ կնոջ վաղմի սովորութեամբ երեսներ միշտ կալած ունէին և ցոյց էին տալիս իրանց ամենամեծագուր ազգայնական միայն, այն օր, ընդհանուրապէս, բոլորի երեսներն էլ քայլ էին: Կարծես, նրանք ներկայանում էին հարազատ եղբորը կամ իրանց ծնողին: *) Կրանք Տաթևի

*) Նրանք է, կանանց ծածկապահութեան վերաբերութեամբ մեր և պարսից մէջ մի և նոյն սովորութիւններն էին տիրում: Պարսիկները թէև շատ խստութեամբ պահպանում են հարկական կանանցները, բայց իրանց ազգային մեծ տօնի օրը, որ կատարվում է գարնանամուտին և կոչւում է Նոօվրուզ (նոր օր), բարձր դասի կանանց հասարակութիւնը նույնպէս ներկայանում է շահին հանդիսաւոր սէլլամի ժամանակ և չը նորհաւորում է թաղապետի շար օրը: Նրանց բոլորի երեսները քայլ է լինում, ներկայանում են առանց ծածկոցի, օրպէս կարող էին երեսով միայն ամուսնանալով կամ ծնողներին: Թագաւորը այսպիսի դէպքերում հասարակաց հայր է համարվում, կրնա նրանից պէտք է չը ծածկել:

աւանդին էին: Երբ բէկը յայտնվեցաւ բակում, նրանցից երկուսը բաժանվեցան խումբից և առաջ եկան: Մէկը Տաթևի աւագ քահանայի հրեցիկն էր, իսկ միւսը նայն տեղի տանուգիրտի տիկինն էր:

—Մեր տղամարդիկը, սաաց երեցիկներ առաջ ընթանալով,—դճում են իրանց կեանքը, իրանց արիւնը մեր հայրենիքի ազատութեան համար, իսկ մենք՝ կրկիններս, որպէս զի անաման չը մը նանք սուրբ գործից, նուրում ենք մեր զարգիլը: Ընդունեցե՛ք, բէկ, մեր կողմից այդ փոքրիկ նուրը, որպէս նշան մեր համակրութեան և խորին զգացմունքի: Այդ զարդերով թող դէնք, փառք ու գնդակ գնով, թող մեր երկրի տղամարդիկը պատերազմին նրանցով: Երբ նրանց յաղթութեան համարը կը լսենք, այնուհետև մեր ամենաթանկագին զարդը կը լինի նրանց քաջութիւնը:

Բէկը չը կարողացաւ թաղանքի իր սրտի ամենազգալի ցնցումը: Ուրախութեան արտաշարժը դուրս ցայտեց նրա խորախորտուրդ աչքերից, երբ մի քանի ուրիշ կրկիններ առաջ մատուցին պղնձէ սինիներով վրա դրած նուրիւրները: Այդ նրանց զարդերն էին: Սինիները մէջ կային՝ զընտիր, մատանիներ, պարանոցի մանակներ, ապարանքներ և գանազան այլ տեսակ արծաթեղէն, ոսկեղէն զարդեր: Առաջին սինու վրա դրած էր մի փունջ ծաղիկ: Պատիկ պատրաստելու գաղափարը դեռ անձանօթ էր նրանց: Տանուտէրի կինը, որ աւելի մանկահասակ էր քան թէ առաջինը, վեր առեց փունջը և իր ձեռքով տուեց բէկին: Նա, երեկ, կամենում էր մի բան տեսնել, բայց չի կարողանում ընդունի կապիկցաւ: Իսկ այդ լուռ չիտիութեան մէջ զգացմունքի և շնորհակալութեան արեւան ազդու արտաշարժութիւն կար, որ բէկը իսկոյն ըմբռնեց, թէ ինչ էր կամենում տեսնել հայրենասէր կինը, և նրա ձեռքից առնելով փունջը, ասաց՝

—Ձեր վարմունքով դուք նմանում եք ձեր հիւրերին: Դարու քոյրերին. նրանք էլ ձեռպէս նուիրեցին իրանց զարդերը հայրենիքի ազատութեան գործին: Նրանք նուիրեցին և իրանց արիւնը, մասնակցելով կռիւի մէջ: Իսկ եթէ դուք չէք կարող հետեւել նրանց օրինակին՝ վերք տալ և վերք ստանալ թշնամուց, գոնէ ընդունեցե՛ք զարմանել ձեր տղամարդերի վերքերը: Եւ այդ ամենամեծ առաքնութիւնն է, որ կրնա կարող է մատուցանել պատերազմող մարդուն:

—Մենք ամեն բանի պատրաստ ենք, ամեն զոհաբերութիւն յանձն կառնենք, պատասխանեցին կրկինները: Թշնամին մեր տունը քանդեց, մեր օջախի ծովը մարեց, էլ որ օրվայ համար ենք ապրում: Նա արատաւորեց ամեն ինչ, որ սուրբ և մաքուր էր մեզ համար: Այլ ևս համբերութիւն չէ մնացել: Կամ պիտի մի անգամով մեռնենք, կամ պիտի տառապանք վատ գրութիւնից: Մենք մեր պատիկ, մեր ընտանիքի, մեր կայքի տէրը չէինք: Որդիք էինք մեծացնում, նա էր տանում. անասուններ էինք հասցնում, նա էր տանում, մեր զաւակներին համար շարք էինք գործում, կտաւ էինք պատրաստում, նա էր տանում, իսկ մեր զաւակները մնում էին մերկ: Նա մեզ մօտ ոչինչ չէր թողնում, ինչ որ լաւ էր, ինչ որ մեղ հարկաւոր էր: Ել ինչին է պէտք այսպիսի կեանքը, երբ մարդ իր գլխի, իր տան տէրը չէ: Մենք շատ անգամ ցոյց ենք տուել թէ հարկաւոր ժամանակ ինչպէս պէտք է վարվել թշնամու հետ: Այն երեսի կինը, տաթևացի Սօման, մեր քոյրերից մէկն էր, որ իր գեղեցկութեամբ հրապուրեց Ալի-խանին, և մի գիշեր իր տունը բերելով, գլուխը կտրեց: Նա մեր երկրը ազատեց մի բռնակալից, թէև ինքն էլ իրան սպանեց զործողութիւնը մենք միշտ համակրութեամբ ենք լսել մեր ծնողներին:

պակասութիւնը: Այդ երկու պատճառներն էլ կան թիւրքաց Հայաստանում,—և հաշտեցնել անդադար գաղթում են իրանց հայրենիքը:

Պէտք է, ուրեմն, նախ ապահովել հայի անճանաչան և ընտանեկան գոյութիւնը օրինական ճանապարհով և այդ գործողութեան հետ գուզընթացաբար բանալ նրա առջև նրա հայրենիքում աշխատանքի և նիւթական վաստակի նոր և հաստատ աղբիւրներ, որպէս զի նա կապված մնայ իր մայրենի հողի հետ և հարկ չունենայ գաղթել օտարութեան մէջ:

Բայց ինչպէս անել այդ նպատակին հասնելու համար,—այդ մենք կը քննենք մեր հետեւեալ յօդուածում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐԻՆ

Թիֆլիս, մայիսի 2-ին

Որովհետեւ մեր պարբերական հրատարակութիւնների մէջ «Մշակը» միշտ տալիս է եղել հասարակական կենսական խնդիրների զարթոնչ, համարեա նրա ինքնիշխանութիւնը կայացել է: Պայտի երեք մեծ ընկերութեանց միութիւնը, ուստի մենք դիմում ենք «Մշակին» կրկին արձարծել այս խնդիրը, որ գուցէ նոյնքան և աւելի անհրաժեշտ է, որքան և առաջինը: Քաջայայտ ենք որ հիւսիսեւր «Մշակը» զի զանազ իր յետադաջ համարների էջերից մեկում զետեղելու մեր առաջարկութիւնը, որ կարծես անհրաժեշտ օրական խնդիր է Հայաստանի և հայաստանցու համար:

Պ. Ուղղորդի» նամակը «Մշակին» մէջ մի տխուր տպաւորութիւն է թողնում ընթերցողի վրա: Այստեղ պարզ երևում է հայաստանցու խեղճ հայ գիւղացու արդի անմխիթար և ողբալի վիճակը. ամեն տեղ խեղճ լինել, չքաւորութիւն, անտեսական կատարեալ անկում... Ի հարկէ այս բոլորը թէ տաճկահայերը, թէ նոյն իսկ մենք վերագրում ենք քիւրդերի և չիւրքերի բարբարոսութեան, հարստահարութեան: Եւ չենք ժխտում այդ, բայց բոլորովին համաձայն զրա հետ չենք կարող երկրի այդ

խեղճ դրութիւնը մենք վերագրում ենք զլրատարապէս հայ գիւղացու տղիտութեան գիւղատնտեսութեան մէջ: Հայ գիւղացին մինչև այժմ էլ կառավարվում է նոյն տնտեսութեամբ, որով գուցէ քանի մի դար առաջ կառավարվում էին նրա պապերը. այս կէտում հայ գիւղացին նման է չինատանցուն. նա չէ մտածում իրանից ոչինչ միջոց բարեփոխել իր անտեսական դրութիւնը, նա չէ փորձում անել մի նոր գիւտ իր առօրեայ կեանքի բարորութեան համար: Նա անուամ է միայն այն, ինչ որ տեսել ու լսել է աւանդութեամբ իր նախորդներից, քստ երեւոյթին նա գուրկ է որ և է յառաջագիւղական քայլ առնելուց իր անտեսական դրութեան մէջ, նա նա հասկանալի է, կայր հետեւող իր պապերի, առանց իսկ հասկանալու, ըմբռնելու իր արածը: Նա գործում է մեքենայաբար:

Ահա, մեր կարծիքով, զլրատար պատճառը հայ գիւղացու աղքատութեան ու նիւթական խեղճութեան: Երկրորդ չափազանց հարուստ, բերրի, սակայն նրան կանոնաւոր կերպով արդիւնաբերող չը կայ.... Ո՞վ է մեղաւոր:

Այստեղ մենք էլ մեր հինգ ձայնը միացնում «Մշակի» յարգելի խմբագրի և երբեմն նրա եւ ռանգուն աշխատակից պ. Գրիգոր Նիկողոսեանի հետ կը սղոյնենք, որ միջ հարկաւոր են արուեստագործական դարձներ, որոնց մի ճիւղն էլ անշուշտ պէտք է համարվի գիւղատնտեսութիւնը և առհասարակ տնտեսութիւնը, բաւելու ընդարձակ նշանակութեամբ:

Ի՞նչ են անում արդեօք հաճախատան բաղմաթիւ հայ բարեգործական ընկերութիւնները, աչքի առաջ ունեն արդեօք այս կարևոր կէտը: Այդ բոլոր բարեգործական ընկերութիւնները ձգտում են մի նպատակի՝ ուսումնական ծաւալելու Հայաստանի մէջ, կարծես թէ բարեգործութիւնը միայն ուսման մէջ է....

Լաւ իմացեք, յարգելի պարոններ, որ քաղցած փորին ուսումը ոչինչ է կարող տալ, քաղցած փորով գիւղացին իր դաւալը չի տայ ուսումի: Առաջ պէտք է ուսումն ընդունելու համար կարևոր նախապատրաստութիւններն ունենալ: Գուք հաց տուէք քաղցած փորին, չոր տուէք լիւրի, ձմեռնային սառնամանիքից կապտած երեխային և ապա թէ նպատակը զարգի նստաբանի վրա:—

Հաճախատան բաղմաթիւ պատկառելի ընկերութիւններ լաւ իմացեք, որ աշխատանքի բաժնուած է հարկաւոր. ձրի ուսում տարածելը «Մշակեալ ընկերութեան» թողնեցէ, նա այդ

իր վրա է առել, այդ պատկառելի մարմինը ռաւական երաշխաւորութիւն ունի ազգից:— Իսկ դուք ձեր բաժան բաժան ուժերը միացնելով կազմեցէք մի ուրիշ նոյնքան կարևոր և պատկառելի մարմին. «Արուեստագործական ընկերութիւն», առէք ժողովրդի բարորութեան միւս ոչ պակաս ճիւղը ձեզ վրա: Շինեցէք գիւղական շտեմարաններ, սովորեցեք հայ աղջկան եւրօպական կաթնային տնտեսութիւն, սովորեցեք հայ գիւղացուն եւրօպական այգեգործութիւնը, գիւղատնտեսութիւնը, ծանօթացեք նրան եւրօպական նոր երկրագործական գործիքներին հետ, ցոյց տուէք նրան միջոց օգուտ քաղելու երկրի բնական հարստութիւնից՝ աւելի արդիւնաբերելու և այն ժամանակ հաստատ կարելի է ասել որ Հայաստանը և հայ գիւղացին կը լինեն երջանիկ....

Իմանալու էլ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ПОРЯДОКЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Բերլինից „Порядокъ“ լրագրին գրում են հետեւեալը: Յայտնի է, որ այստեղի պատերազմական շրջանների մէջ մի ժամանակ համագործակցեցէք կար, որ Գերմանիային ամենակարճ ժամանակվայ մէջ մի մահաւ և կեանքի կոխ է սպասում Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ: Բացի այդ շատերը կարծում էին, թէ իշխան Բիսմարկ ցանկանում էր, որ Գերմանիան իր կենդանութեան ժամանակ երթարկի այդ փորձին: Եւ այնքան փորձած քաղաքագետ չեմ, որ կարողանամ դատել պատերազմական շրջանների այդ կարծիքի իրաւացիութեան կամ անիրաւացիութեան մասին, բայց ինչ կը վերաբերի իշխանի յարաբերութեանը դէպի այդ գործը, եւ կարծում եմ, որ դա անհիմն է: Գնեա պետական այդ մարդու խօսքերը և գործերը ապացուցանում են, որ նա չէ պատրաստվում մի մեծ պատերազմ սկսել իր հարեւանների հետ և ոչինչ թշնամութիւն չունի նրանց հետ:

Եւրոպական պէտք է մինը միւսին օգնութեան համար: Այս պատճառով իւրաքանչիւր վիճակի համար որոշված էին մի քանի խումբեր: Խմբադասները զլրատարապէս այն անձինքն էին, որ բէկը իր հետ բերել էր վարաստանից: Լօւէյցի Աւթմանիլը դնդաւորու և Երևանցի կաղ Ոհանէսը, որ յայտնի էր իր ճարտարութիւններով, ուղարկվեցան դէպի Հին Նախիջևանի կողմերը: Մեծ Գիօրգին և Բուք Գիօրգին ուղարկվեցան դէպի Չաղազարի կողմերը: Զաքարիայ Լիւխանը և պատանի Մօսին ուղարկվեցան Երասի գետի ափերի վրա՝ դէպի Բարդիւշատի կողմերը: Թաթեօս բէկը և զանաւակից Նիկողայ արան ուղարկվեցան դէպի Սիւրխաթի կողմերը: Վաղարշապատից Գարուբեկն տանուէրը ուղարկվեցաւ դէպի Գողթնից երկրի կողմերը:

Եւթէ թշնամու տունը կամենում եւ հրդեհել, պէտք է կրակը մի քանի տեղից վառել, որ չը կարողանայ հանցանքը: ասում էր բէկը: Վերջիւստ խումբերը ուրիշ նշանակութիւն չունէին, բայց միայն կայծեր գցել Սիւրխաթի աշխարհի զանազան կողմերում, խռովել, աղմուկ և դադեցնել թշնամու:

Բայց բէկի զլրատար ուժերը, որոնց նա կարգել էր որպէս պատերազմող և արեալետող ուժեր, կազմված էին բաւել իսշոր խումբերից: Այդ խումբերը յանձնված էին Սիւրխաթի աշխարհի նշանաւոր աւագների ձեռքը, որոնք ուստակից կան բէկին և հաւատարմութեան երզում տուցին:

Չաւարտի Թորոս իշխանը ունէր իր հրամանի ներքոյ 2000 հոգի. նրան օգնական էր տուել բէկը Բալինդուր իշխանին և Թորոսի աղբական մէկը Նուբարին: Հալի-ձորի մէկը Փարսադանը և նրա որդի Բալի զօրապետը ունէին իրանց հրամանի ներքոյ 500 հոգի: Մէլիք Փարսադանի փեսայ տէր Աւարիքը ունէր իր հրամանի ներքոյ 468 հոգի: Կալերի Պապ զօրապետը և բէկի սի-

ր սովորութեան հակառակ իշխան Բիսմարկի դատակի տօներին դիւղը չը գնաց: Աշխատանքի շատութիւնը և արտաքին գործերի վրա հսկելու անհրաժեշտութիւնը ստիպեցին իշխանին մնալ Բերլինի մէջ: Բայց հանգստութեան այդ պակասութիւնը չարգելեց իշխանին նոր ուժեր հաւաքել: Նրա ներկայութիւնը լայնատաղի մէջ ապացուցեց, որ նա պատրաստ է ընդդիմադրել իր հակառակորդներին: Այդ նիստի ժամանակ քննվում էր կանցլերի յարձակումը Բերլինի քաղաքային վարչութեան վրա, որի պաշտպան հանդիսացաւ Բիստեր և մի գեղեցիկ ծառ ասաց այն օրինազօր դէմ, որով առաջարկվում է վերանայական աստիճանաւորների բնակարանների չը վերցնել դնահատողական հարկ յօդուա քաղաքի: Բիստեր ապացուցեց, որ իշխան Բիսմարկի յարձակումները Բերլինի քաղաքային վարչութեան վրա կատարելապէս անհիմն են: Գնահատողական մասնաժողովը, ինչպէս ապացուցված է դօկումենտներով, մինչև անգամ Բիսմարկի բնակարանի վերաբերութեամբ վարկէ և օրէնքի համեմատ: Գնահատողական հարկը, որ ամենքից մատուակ չէ ստացվում, համապատասխանում է Ֆինանսական պրակտիկային և այնպէս չէ ծանրանում ազգաբնակչութեան վրա, ինչպէս մթերքների հարկերը: Բացի այդ աստիճանաւորների բնակարանները եթէ հարկից ազատ լինեն, նրանք մի նոր արտօնութիւն կը ստանան, չը նայելով, որ պետութիւնը նրանց ձրի բնակարաններ է տալիս: Բիստեր աւելացրեց, որ իշխան Բիսմարկ յարձակում է քաղաքային վարչութեան վրա այն պատճառով, որ նրան ատելի է ամեն տեսակ ինքնավարութիւնը, ուրեմն, նրա կարծիքով, իւրաքանչիւր գերմանացի, որի համար թանգ է աղատութեան սկզբունքը և որ գնահատում է Գերմանիայի ապագան, պէտք է ընդդիմանայ Բիսմարկի յետադիմական ձգտումներին:

Իշխան Բիսմարկ այդ ծառին Ֆելիետօնի ձեռով պատասխանեց: Կարծես նա իր ծառը

Թէ բէկը, թէ Ներսէս Եպիսկոպոսը և թէ այնտեղ կանգնած աւագները մեծ ուրախութեամբ էին լսում կնիկների խօսքերը: Երբ նըրանք աւարտեցին, Եպիսկոպոսը ասաց.

—Ես հաւատացած եմ, որ սինեցի կինը նոյնքան քաջասիրտ է, որքան սինեցի տղամարդը: Բայց դուք մոռանում էք մի անցք, որ պատահեց մեզանից մօտ քսան տարի առաջ: Այդ անցքը կարող է ձեզ լաւ օրինակ լինել: Պարսիկները տիրեցին Գնուաղի ամբողջ դաւառը, մնաց միայն Կալեր աւանը, որը չը կամեցաւ անճանաչու լինել և քաջութեամբ պայքարեց: Վերջը պարսիկները խաբէութեամբ տղամարդերին կանչեցին իրանց բանակը, հրամայեցին բոլորին կոտորել: Այդ դաւաճանութիւնից յետոյ կամենում էին տիրել Կալերին: Բայց կնիկները զինուորեցան թշնամու դէմ և բոկսեցին կուռը: Երկար պայքարանում էին նրանք, իսկ երբ նկատեցին, որ այլ ևս ընդդիմանալ չեն կարող, թունաւորեցին բոլոր աղբիւրները, և իրանց տներին կրակ տալով, պատապարկեցան անտեսների մէջ: Այդ բոլորը դուք գիտեք, շատ ժամանակ չէ անցել այն օրից:

Կնիկները յայտնեցին, որ ամեն մի դէպքում կաշխատան հետեւել իրանց այդ արժանաշիշտակ քոյրերի օրինակին: Եւ նրանց ներկայացուցիչները երեցիկներ ու տանուէրի կինը համբուրեցին սրբազանի աջը, և նրա օրհնութիւնն առնելով, բոլորը զլուխ տուցին, սրբաւորութեամբ դուրս եկան վանքից:

Բէկը հրամայեց նրանց բերած նուէրները տանել իր գանձարանը, որ արդէն կազմված էր վանքում: Յետոյ իր աւագների հետ դիմեց դէպի դաշինք: Գնաւու միջոցին Եպիսկոպոսը մի առանձին ողբերգութեամբ ասաց նրան.

—Տեսնում եք, բէկ, իմ աչսօրվայ քարոզը հինգերորդ դարու կանանց մասին, երբեւմ է աղբեցութիւն է գործել դրանց վրա: Ես ուրա-

րելի Ստեփաննոս Շահումեանը ունէին իրանց հրամանի ներքոյ 700 հոգի: Սիսիանի Լեւոն զօրապետը ունէր իր հրամանի ներքոյ 500 հոգի: Սիսիանի մէկը Կաջօն ունէր իր հրամանի ներքոյ 200 հոգի: Սիսիանի տէր Գաւապարը, որ և կուզում էր «Աւաթ կեց», ունէր իր հրամանի ներքոյ 250 հոգի: Բաղաբերդի Աղամ զօրապետը ունէր իր հրամանի ներքոյ 150 հոգի: Գիւլ-բերդի Վաղար զօրապետը ունէր իր հրամանի ներքոյ 110 հոգի: Շիւրմանաձորի Սարգիս զօրապետը ունէր իր հրամանի ներքոյ 250 հոգի: Զօրապետ Մաղալ մէլիքի երկու որդիները՝ Աշուտ և Սմբատ ունէին իրանց հրամանի ներքոյ 400 հոգի: Տաթեօսի Կիլի, Այալի, Եսայի և Թիւրապետ Սիմէն տանուէրները ունէին իրանց հրամանի ներքոյ 400 հոգի: Շինիկի Միսառ և Ստեփան տանուէրները ունէին իրանց հրամանի ներքոյ 550 հոգի: Մեղրիկի մէկը Կոստանդինը, Յովհաննէսը, Սարի և Աւաքը տանուէրները ունէին իրանց հրամանի ներքոյ 400 հոգի: Բալը զօրաբերի թիւը հասնում էր 6878 հոգու: Յիւնալ գունդերի վրա բէկը սպարապետ կարգեց Մկիթարին, բայց ընդհանուր հրամանատարութիւնը իր վրա պահեց:

Այդ կամաւոր զինուորները հաւաքված էին նոյն զօրապետների ձեռքով, որոնց հրամանի ներքոյ և գաւառում էին նրանք: Զօրապետներից շատերը, որպէս էին Թորոս իշխանը, Մէլիք Փարսադանը, Պապ զօրապետը, իրանց ծախքով զինուորել էին իրանց գունդերը, իսկ ուրանք հաւաքել էին իրանց իշխանութեան տակ: Եղող զիւղերից:

Բէկը վճուր չուտով սկսել իր յարձակողական գործողութիւնները:

Եւ իմանալով, որ մի քանի օր անցած քիչ—

յան վաղից չենք տեսնում այդ մի քանի փոխապետ նմանքս: (Կը չարունակվի)

արտասանում էր ոչ թէ պետական շահերը պաշտպանելու, այլ իր ունեւորներին ծիծաղեցնելու համար: Վերջը իշխան Բիւմարի յայտնեց, որ նա մտադիր է մայրաքաղաքը Բերլինից մի այլ տեղ տեղափոխել, որովհետեւ կառավարութիւնը, բարձր վարչութիւնը և օրէնսդրական ժողովը ապահով չեն կարող լինել միջնաւոր ազգաբնակչութիւն ունեցող մի մեծ քաղաքի մէջ, իսկ օրէնսդրական ժողովը չէ կարող ժողովրդի ներկայացուցիչ լինել, քանի որ նրան մասնակցում են չափից դուրս շատ բերլինցիներ: Եւ միշտ մի անսակ նմանութիւն եւմ նշմարել իշխան Բիւմարիի և մեր պաշտպանողականների ներքին քաղաքականութեան մէջ: Այդ նմանութիւնը կը գտնի իւրաքանչիւր մարդ, որին պատահէ և կարգաւ իշխան Բիւմարիի օրգանները և մեր «МОСКОВС. ВѢД.» և «РѸС» լրագիրները: Այդ լրագիրները մինչ այն աստիճան միմեանց նման են և միատեսակ դատողութիւններ են տալիս ներքին հարցերի և «ժողովրդական ոգու» մասին, որ կարծես երկուսի կողմերէն օրգաններ լինեն: Բայց ոչ ոք չէր սպասում, որ Գերմանիայի կանցլիսը կը սխալ այդպիսի հրապարակածների լեզուով խօսել: Արիւնք է, որ սպառնալով Բերլինին զրկել այն շահերից, որոնք կապված են բարձր կառավարութեան այդ քաղաքի մէջ մնալու հետ, Բիւմարի կամենում է ստիպել բերլինցիներին լայնատաղի համար կառավարութեան կուսակիցներին ընտրել և ոչ թէ, ընդգիծողոր առաջադէմներին, ինչպէս լինում էր մինչև այժմ:

Մինչդեռ ասոնքի ժամանակ իշխան Բիւմարի վերականգնում էր իր առողջութիւնը, նրա գործակից Պուսկովսկի և Մայբախ միւնիստրներն էլ իրանց գործն էին կատարում: Գանկանալով հետեւել իրանց առաջնորդի օրինակին, նրանք սկսեցին հալածել մամուլը: Հասարակական աշխատանքների միւնիստր Մայբախ հրամայեց իր ստորադրեալներին, որ պետական յայտարարութիւնները միայն այն լրագիրներին տրվեն, որոնք կառավարութեանը բարեկամաբար են վերաբերում: Եթէ նրանցից մէկը այդպիսի յայտարարութիւնը ընդգիծողական լրագրի մէջ տպել, յայտարարութեան գինը նրա ունեւոր պէտք է վերցնել:

Պուսկովսկի, ներքին գործերի մինիստր լինելով, աւելի միջոց ունի փնտրել Բիւմարիի հակառակ լրագիրներին Սոցիալիստների դէմ հրատարակված օրէնքով գինաւորված, նա կարող է ոչ թէ միայն դրամական տուգանքներ առնել, այլ և բոլորովին դադարեցնել ցանկացած լրագիրը: Պետերբուրգի լրագրի, «Բորսային սուբսանդակ» և «Բերլինի Օրագրի» համարները կալանաւորված են 11/2 շաբաթվայ ընթացքում: Վերջին լրագիրը պատժված է անբարոյականութիւնը նրա մէջն է, որ նա տպել է Շպիլհայնի «Հրեշտակ» բամբակե օտարոտի երեւոյթ է, որ գերմանացի աստիճանաւորները մեղադրում են Շպիլհայնին անբարոյականութեան մէջ: Ճշմարտութիւնը հասկանալի դարձնելու համար, պէտք է նկատել, որ այդ լրագիրը հակասեմիստների թշնամի է և դատաւարտում է նրանց ցուցիչը: «Բորսային Սուբսանդակը» պատժվեցաւ Բոշխորի մի քանի յօդուածները արտատպելու համար, թէպէտ լրագիրը դատաւարտում էր այդ յօդուածների մէջ յայտնած մտքերը: Բայց պէտք է նկատել, որ այդ լրագիրը աւելի մեծ թշնամի է հակասեմիստների և պոլիցիական ճարպիկու-

թեամբ յայտնում է նրանց գործած անկարգութիւնները:

Հակասեմիստները վայելում են Բիւմարիի հովանաւորութիւնը, որովհետեւ նրանք կառավարութեան բարեկամ կուսակցութիւն են կազմում: Սակայն որովհետեւ նրանց հրապարակածները չափազանց զովում են իշխանի անգնահատելի արժանաւորութիւնները: Միւսնոյն ժամանակ սոցիալիստների դէմ հրատարակած օրէնքը չափազանց յարմար է և ներքին գործերի մինիստրը օգուտ է քաղում նրանից, փնտրելով Բիւմարիի հակառակորդներին: Այդ օրէնքը ուղղված է սոցիալիստների դէմ: Այդպէս էր հասկանում նրան օրէնսդրական ժողովը և նախկին մինիստր Էյլենբուրգ, բայց այս վերջինը անկախ մինիստր էր և այդ պատճառով ստիպված էր հեռանալ: Օրէնքի մէջ մտնում էր, որոնց վրա լայնատաղի անդամները իր ժամանակին ուշադրութիւն դարձրին, բայց այն ժամանակ ասում էին, որ պէտք է հաւատ ունենալ գէպի կառավարութիւնը և լայնատաղը համաձայնեց: Այժմ ներքին գործերի մինիստրը ի չարն է գործ դնում այդ հաւատարմութիւնը օգուտ քաղելով օրէնքի մտնում էր և հալածելով Բիւմարիի հակառակորդներին:

Ա. Ն. Գ. Ի. Ս.

Լրագիրները հաղորդում են, որ կալուածական ինքիւրը Անգլիայի մէջ աւելի գործնական ձև է ստանում, առիթ տալով օրէնսդրական առանձին փոփոխութիւնների և խոտանալով ապագայում բարեւաւել երկրագործների գրութիւնը, որոնք այժմ արդիւնաբերական և կալուածատէր տիրաւորակցից կատարելապէս ճնշված են: Նուրբուրմ համայնքների ժողովի մէջ քննարկում էին կալուածատէրերի ղեկընդունները և նրանց առաւելութիւնները երկրագործ ազգաբնակչութեան վերաբերութեամբ: Այդ հարցը բարձրացրեց համայնքների ժողովի անդամ Բլեննիքաստ: Կալուածատէրերը իրաւունք ունեն երկրագործի չը հատուցած ասրեկան տուրքը ապահովել նրա ցանած հացով: Այդ հացից երկրագործի միւս պարտատէրերը չեն կարող օգուտ քաղել և բաժին ստանալ: Որովհետեւ հանգամանքները և աղքատութիւնը ստիպում են երկրագործին ամբողջութեամբ չը վճարել կալուածական տուրքը, կալուածատէրերը օգուտ են քաղում օրէնքից և արգելում են երկրագործին հաւաքել ցանածը: Համայնքների ժողովը համաձայնեց Բլեննիքաստի առաջարկութեան հետ և փոխեց այն օրէնքը, որ կալուածատէրերին տալիս էր իշխալ արտօնութիւնը:

Ձը նայելով, որ ընդգիծողական կուսակցութիւնը խտուութեամբ յարձակվում է Գլադստօնի կալուածական նոր օրինագծի վրա, այնու ամենայնիւ նրա մի քանի մասերը բոլոր կուսակցութիւնների հաւանութիւն են ստանում: Օրինակի համար օրինագծի այն մասը, որ առաջարկում է պետական օգնութիւն հասցնել երկրագործներին հողի գինիւ համար, երեւի կընդունվի մեծ կալուածներ ունեցող պարլամենտի անդամներից, որոնք ընդգէմ են օրինագծի ամբողջութեանը:

Անգլիական պաշտպանողականները դեռ ևս չեն կարողացել մշակել իրանց գործողութեան նախագիծը կալուածական վերանորոգութիւնների վերաբերութեամբ: Այդ կուսակցութեան անդամներից մէկը առաջարկել է մերժել Գլադստօնի օրինագիծը, բայց տալով, որ երկրագործական պայման-

ները վերանորոգելու փոխարէն անհրաժեշտ է զարգացնել իրանդիայի մէջ արդիւնաբերութիւնը և առևտուրը: Այդպիսով իրանդիայիներին խորհուրդ են տալիս թողնել երկրագործութիւնը և պարտաւել առևտրով և արդիւնաբերութեամբ: Այդ ստորադր առաջարկութիւնը մինչև անգամ պահպանողականների շրջանում աջողութիւն չունեցաւ, բայց դա տպագրուցանու է տօրիներին անկումը, որոնք քննեցին այդ հարցը իրանց ժողովի մէջ: Նրանցից ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց այն իրողութեան վրա, որ Երկրագիրայի արդիւնաբերութեան գլխաւոր բաժինը դարբնի ընթացքում երկրագործութիւնն է եղել և նոր պարագմունքների հնարիւր հինք բարելաւելու փոխարէն գործնական միտք չունեցող խորամանկութիւն կը լինէր: Երկրագործ իրանդիայիներին առևտրական զարմեւում միտքը ծաղրալի է և քաղաքական նշանակութիւն չէ կարող ունենալ: Այսպիսով երևում է, որ պաշտպանողականները չունեն մի նախագիծ, որով կարողանան ընդգիծողական Գլադստօնի առաջարկութեանը: Պարլամենտի իրանդական պատգամաւորները նորիւրում յայտնեցին, որ նրանք կընդգիծանան Գլադստօնի օրինագծին այն պատճառով, որ այժմ իրանդիայի մէջ վարչական խիստ միջոցներ են գործ դնում: Այդ հանգամանքը յոյս տուեց պաշտպանողականներին, որ նրանք կարող են աջողութեամբ ընդգիծողական Գլադստօնին, բայց այս վերջինը նորիւրում յայտնել է, որ նա պատրաստ է վարչական խիստ միջոցների չը դիմել, եթէ նրանք աւելորդ կը լինեն և անյարմար կալուածական վերանորոգութիւնը աջողեցնելու համար:

Լօնդոնից «Polit. Corresp.» լրագրին հաղորդում են, որ անգլիական կառավարութիւնը դեռ ևս չէ նշանակել անգլիական դեսպան ուսաց կառավարութեան մօտ լորդ Գիօֆերինի տեղ և այդ հանգամանքը մինիստրութեանը բաւական հոգսեր է պատճառում: Մի ժամանակ կառավարութիւնը կամենում էր չենրի Լայարդին դեսպան նշանակել, բայց դրան արգելք եղաւ այն հանգամանքը, որ Լայարդը Կ. Պոլիս եղած ժամանակ բարեկամաբար չէր վերաբերվում ուսաց քաղաքականութեանը և այդ իրողութիւնը կարող է արգելիլ նրան անգլիական կառավարութեան ցանկացած դիրքը ունենալ: Ա. Պետերբուրգի մէջ Պետմում են, որ Լայարդը կը փոխարինէ անգլիական դեսպանին Վաշինգտօնի մէջ, իսկ այս վերջինը Ռուսաստան կը գայ:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլիս հայոց պատրիարքը մասնաժողով է նշանակել Գալֆայան ընտանիքի ունեցած իրաւունքը Կիպրոս կղզու վրա և նրա հետ կապված Լուսինեան իշխանների տիրույթ կրելու իրաւունքը քննելու համար: Այդ ընտանիքի զբաղմունքը, հայոց արքեպիսկոպոս Խորենը, հաստատում է, որ ինքը Գալֆայանների ցեղից է, որ XIV դարում Բագրատիւնից էր: Բայց ինչպէս յայտնի է, նայն անկախութիւնը մի ժամանակ յայտնել էր և Քրանսիայի Շարլ-Միսն Բու, իշխան Լուսինեան, որ իր տոհմը համարում էր Պուստուրի Լուսինեաններից ծագած: Այժմ դրա որդին Շարլ-Լուգվիլ-Միսն Բու, իմանալով որ Կ. Պոլիսում մի մասնաժողով է կազմվել Լուսինեան իշխանների իրաւունքները պարզելու համար, տեղեկացնում է մասնաժողովին որ իր հօրից ժառանգած դիւրամենտների գործութեամբ նա մշակել իրաւունք ունի այդ վիճելի տիրույթ վրա: Հայոց պատրիարքը, ինչպէս երևում է, աւելի հակումն է ցոյց տալիս դէպի Գալֆայանների ընտանիքը, թէպէտ երկու կողմնորն էլ ի-

զուր են այդքան տաքանում: Բ. Գուրը պատրիարքի վճիռը հաղիւ թէ օրինաւոր համարի: Այդ վճիռը այժմ կարող է աւելի էլ կարեւոր նշանակութիւն ստանալ, քանի որ հանգիստ գանձեր գտնվեցան Կիպրոս կղզու վրա, որոնք յանձնված են Նիկոմիդիայի արքեպիսկոպոսին: Ժամանակով ճանաչված իշխան Լուսինեանները, ի հօրից, կարող կը լինեն յետ պահանջել այդ գանձը:

Աւստրիայի թագաւանաց իշխան Բուգօլֆի հարսնացու իշխանուհի Սոլֆաւիա Վիլհելմա-դաքը մտնելու օրվայ համար հարուստ բարձր Բոսլիլդ պատուիրել է ծաղիկներ 60,000 Քլօրին գումարի, իր պալատի դուրը դարդարելու նըպատակով:

Լօրդ Գլենման, եւանդոտ հովանաւոր ամեն տեսակ անասունների, ունի մի կարծաւտն ձի և ամեն կերպ աշխատում է ձիւն այդ ֆիլիպական պակասութեան դէմ միջոցներ գտնելու: Այժմ պատուելի Լօրդը ամեն օր զբոսնում է Լօնդօնի փողոցներում հեծած ալդ կործաւտն և անոցներով դիմած ձիւն վրա: Ուրեմն կարելի է յուսալ որ ժամանակով անոցների միջոցով կիսակոյր ձիաներն էլ կարող կը լինեն ծառայել մարդկութեանը: Գուցէ շատ ժամանակ չի անցնի, աւելացնում է մի լրագիր, մենք կը տեսնենք ձիավարութեան հանդէսներում ձիաներին որոնք իրանց տէրերի պէս պէնանելով և մօտիկով դիմած կը լինեն:

Ֆրանսիացի յայտնի ակադեմիկոս և հեղինակ Լըգուվէ, այս օրերս պատահմամբ մի մանուկի կնքահայր եղաւ Ֆրանսիական մի գաւառական քաղաքում: Գրադիրը կնքահօր անունը մատնանի մէջ արձանագրելու ժամանակ զինքը Լըգուվէին, սովորական հարցերը նրան առաջարկելով, — Ձեր ազգանունը, — Լըգուվէ, — Ձեր կոչումը, — Գրուդ, — Ձեր պարտաւոր միջոցները, — Գրիւ, — Եւ այդ հարցմունքները վերջացնելուց յետոյ, զրադիրը հետեւալը նշանակեց վկայական թղթի մէջ: «Կնքահայր պ. Լըգուվէ, տարաւնաւոր և գրիւնի ֆորբիկանտ, Փարիզից»:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ

Մ. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 մայիս: «Правит. ВѢСТ.» լրագրի մէջ տպված է հետեւալ հրամանը: Կոմ Լօրիս-Միլիքով իր խնդրքի համեմատ հիւանդութեան պատճառով արձակված է ներքին գործերի մինիստրի պաշտօնից, մնալով պետական խորհրդի անդամ: Կոմ Իգնատիւիլին հրամայած է վարել ներքին գործերի մինիստրի պաշտօնը: Երէկ գաղափարական պալատը հաստատեց նահանգական դատարանի վճիռը Կաշեվարեվա-Բուզնեվայի մասին Պոլիկարպովի և Բուրենինի վերաբերութեամբ: Վճուված է Բատալինին բանտարկել մի ամսով և 200 ռ. տուգանքի ենթարկել, Ֆեօդօրովին բանտարկել երեք շաբաթ ժամանակով և 400 ռ. տուգանքի ենթարկել:

ՕԻԷՍՍԱ, 3 մայիս: Հարաւում մի քանի տեղեր քրիստոնեաների և հրէաների կոխներ պատահեցան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մայիս: «Сенатскія ВѢД.» լրագրի աւելումով մէջ տպված է հրաման աստուածակրատար Ստրօվկուին վարել պետական կայքերի մինիստրի պաշտօնը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մայիս: Պետական բանկի 5% տոմսակիր առաջին շրջանի արժէ 97 ռ. 25 կ., երկրորդ 94 ռ. 25 կ., երրորդ 94 ռ. 50 1/2 կ., չորրորդ 94 ռ. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տուգանք արժէ 223 ռ. 75 կ., երկրորդ 216 ռ. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակիր արժէ 92 ռ. 87 1/2 կ., երկրորդ 93 ռ., ոսկի 8 ռ. 2 1/2 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,37 պէնս, Ռուսաց 1 ռուբլ վրա 208 պէնս, Ռուսաց 100 ռ. փարիզի վրա արժէ 257 Ֆրանկ: Բորսայի տրամադրութիւնը թոյլ է:

Խմբագիր—հրատարակող Գ. Ի. Գ. Ս. Ս. Ս. Ս.

